Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

84
Я-72

3
22

№ 2038

Հանրամատչելի

ՆԻՆԻՒ ՀԱՄԱՐ

Փոխ. Ֆրանս. Վ. Տ.

Ռուսերէնից թարգմ. Յարութիւն Եապեան

ԹԻՖԼԻՍ 1904
Տպարան „ՀԵՐՄԷՍ“ ընկ. Մադար. փող., 15.
(64)

Հ ա ն ր ա մ ա տ չ ե լ ի

20 APR 2006

ՆԻՆԻԻ ՀԱՄԱՐ

Փոխ. Ֆրանս. Վ. Տ.

Ռուսերէնից թարգմ. Յարութիւն Եսայեան

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻԶ 1904
Տպարան „ՀԵՐՄԷՍ" Ընկ. Մադաթ. փող., 15.
(64)

11 JUL 2013

6919

Доз. ценз. Тифлисъ, 28-го Октября 1904 года

ՆԻՆԻԻ ՀԱՄԱՐ

—Բարի երեկոյ, տիրուհի! Ներեցէք, խնդրեմ, որ եկայ հասարակ բլուզով և գըլխարկով, ինչպէս գործի գնալիս։

Հիմա, ճիշտ է, ես անգործ եմ և այլ ևս ուրիշ ոչինչ չունեմ հագնելու,—ամեն ինչ գրաւ եմ դրել նրա (կնոջ) հիւանդանալուց յետոյ։

Գուցէ թէ դուք ինձ չէք ճանաչում։ Ես Էմիլ Լերուն եմ, հանգուցեալ մօրս Լերուի որդին, որ մի ժամանակ ծառայում էր ձեզ մօտ։ Ինչպէս. դուք մոռացել էք Բրիժիտտային, ձեր պառաւ խոհարարուհուն։

— . . . . . .

Ա՜, յիշեցիք!

— . . . . . .

Այո, ճիշտ որ ես քիչ եմ փոխվել այն ժամանակից, երբ դուք փայփայում և փաղաքշում էիք փոքրիկ Էմիլին... և համբուրում էիք։ Իսկ ինձ այդ դուր էր գալիս, որովհետև ձեր վրայից պուդրի անուշ հոտ

էր գալիս։ Դուք էլ, տիրուհի, ասելս կըշտամբանք չը լինի, քիչ չէք փոխվել։

— . . . . . .

Այո, ես չորս տարի աշխատել եմ շոգենաւերի վրայ, քանի անգամներ եղել եմ Աֆրիկայում, որից և կաշուիս գոյնը փչացել, սևացել է...

— . . . . . .

Իմ գալուս նպատակը։ Ճշմարիտ որ, ես խօսում եմ զանազան բաների մասին և գլխաւորը չեմ ասում։ Դա այն պատճառով է, որ անյարմար է ամեն ինչ ձեզ միանգամից բացադրել։ Ահա և կասեմ։ Տիրուհի, ես եկել եմ ձեզ մօտ Նինիի համար։ Նինին—դա իմ կինս է։

— . . . . . .

Այո, այո։ Միևնոյն է. նա ինձ համար է որպէս կին։ Նա Տէնօն հիւանդանոցումն է, Բիշա դահլիճում, որտեղ բժիշկը բուժում է նրան թոքերի տուբերկուլեոզից—թոքախտից։

Ո՜հ, նա սաստիկ հիւանդ է։ Իմ սիրտս ցաւում է, տեսնելով, թէ ինչպէս նա օրէցօր վատանում է, ինչպէս հալվում են նրա վարդագոյն թշերը, թէ ինչպէս չքանում են նրա աչքերը և այլևս չեն նայում այնպէս

ուրախահայեացք, որպէս առաջ։ Եւ ինչպէս նա նիհարել է։ Ուղղակի չի կարելի հաւատալ։ Ինչպէս նա առաջ գեր էր, թշերի վրայ փոքրիկ փոսիկներով։ Իսկ այժմ կաշուի տակ միայն ոսկոներն են ցնցել, և հազը ցնցում, հարում է նրան, ինչպէս սալթան կողովում։ Հէնց առաջին անգամ որ նա արիւն խորխեց, ամեն ինչ գլխիս շուռ եկաւ, ես ինքս սաւանի նման սպիտակեցի,

—Ոչինչ, խեղճ իմ Միմիլ, այս բոլորը կանցնի, ասաց նա ինձ։

Այն ժամանակ դեռ նա յուսում էր. ես նրան տանն էի բժշկում իմ կարողութեանս համեմատ։

Չէի համարում բժշկի այցելութիւնները, չէի խնայում փողը դեղերի համար։ Հարկաւոր էր միայն սնունդը «լաւացնել»—կարևոր էին համեղ բիֆշտէկներ, լաւ կաթ, մսաջուր։ Ես չէի կարողանում այս ամենը գնել, թէև լաւ եմ աշխատում, երբ առաւօտից մինչև գիշեր պարապում եմ փականագործական (слесарный) արհեստով։ Այն ժամանակ ես վճռեցի նրան հիւանդանոց տեղափոխել։

— . . . . . .

Համբերեցէք, տիրուհի, գիտեմ, որ դուք

ձանձրացաք ինձ լսելուց, բայց ես նոր եմ եղել աշխարհական *) շկոլայում և սովորել եմ ճարտար խօսել։ Ես սկզբից չեմ սկսում և շփոթվում եմ, այն պատճառով միայն, որ գլուխս սաստիկ պտոյտ է գալիս։

Ահա, վերջապէս... Երեք օր առաջ ես տեսայ գլխաւոր բժշկին։ Նա բարձրահասակ է, ճաղատ և ակնոցներով։ Նրա ձայնից իմ արիւնս սառեց։ «Դուք ամուսինն էք, թէ սիրեկանը 19 №-ի, ասաց նա ինձ.—ձեզ յայտնի է նրա հիւանդութիւնը, այո. եթէ նա մնայ այստեղ, կորած է։ Դահլիճի վարակված օդը, ուրիշ հիւանդների հարևանութիւնը նրան կը վնասեն միայն։ Նրան պէտք է գիւղ տանել, թարմ օդի մէջ, եթէ հնարաւոր է, հարաւային երկիր»։ Եւ երբ ես ասացի նրան, որ այլևս չեմ բանում, փող չ'ունեմ, նա պատասխանեց. «Աւելի վատ. ես նրան չեմ վնասում, միայն թէ նա այստեղ կորած է, լսո՞ւմ էք». ասաց ու հեռացաւ. և նրա յետևից գնացին բոլոր բժիշկները սպիտակ բլուզներով և հիւանդապահ կանայք։

*) Հակազիր հոգևոր, եղուիտական շկոլայի, որտեղ սովորեցնում են քարոզ խօսել։

Նինին կարծես իմացաւ, որ դիրեկտորը նրա համար պատուիրել է—արև, այն ժամանակ նա գրկեց իմ պարանոցը և փայփայանքով ասաց. «Միմիլ, ի հարկէ դու չես ցանկանում, որ ես մեռնեմ. տար ինձ Նիցցա *)։ Կը տանե՞ս, չէ՞, սիրելիս»։ Ես աշխատում էի լաց չը լինել և պատասխանեցի. «Բայց դա շատ թանգ կը նստի. որտեղից փող վերցնեմ. ես առանց այդ էլ շատ եմ պարտ խանութին և ընկերներիս»։ Այն ժամանակ նա նայեց ինձ վրայ, տիրուհի, այնպէս ուշադրութեամբ, այնպիսի խղճալի հնազանդութեամբ լի աչքերով, որ նրանք դեռ այժմս էլ կտրտում են սիրտս, և ասաց ցածր ու շտապով. «Այո, ճիշտ է. հարուստները միայն իրաւունք ունեն թարմ օդի և արեգակի. իսկ խեղճերը պէտք է մեռնեն»։ Ես ուզում էի հանգստացնել, մխիթարել նրան. խոստացայ փող գտնել ճանապարհվելու համար։ Եւ ես նկատեցի, թէ ինչպէս նրա սպիտակ շրթունքների վրայ վերադարձաւ թախծալի ժպիտը, մռայլ ժպիտը,—կարծես ձմռան կարմրագոյն վար-

*) Գործողութիւնը կատարվում է Պարիզում։

դեր, երբ դուրսը ցուրտ է և ցեխ։ Միայն
ես ինքս յոյս չունէի. ես գիտէի, որ ոչ մի
տեղից չեմ կարող գտնել հազար ֆրանկա-
նոց տոմսակ ճանապարհի համար։ Եւ իմ
աչքերի առաջ, որոնք արտասուքով լցվել
էին և ես այլևս չէի մաքրում թեքերովս,
կանգնած էր սոսկալի ապագան.—իմ հեզա-
բարոյ Նինին այնտեղ ամֆիթատրոնումն է,
փորը ճղած, կուրծքը բաց, այն անամօթ
ուսանողների և խաղաղ բժիշկների առաջ,
որոնք, ով գիտէ, կարող է պատահել, հա-
նաքներ կանեն...

— . . . . .

Այո, դուք ճշմարիտ էք, տիրուհի, ես
ինձ մոռացայ, ձանձրացրի ձեզ։

Ես այդպիսի յուսահատութեան մէջ էի,
երբ յանկարծ յիշեցի ձեր մասին—դուք այդ-
քան բարեսիրտ էք, մեծահոգի։ Ինձ ասում
էին յաճախ, որ դուք տալիս էք երկու ձեռ-
քով, առանց համարանքի, ամենատեսակ բա-
րեգործական հիմնարկութիւնների, վանքերի,
որբանոցների. նոյն իսկ ես գիտեմ, որ մեր
քաղաքամասում կան ապաստարաններ, ո-
րոնք ձեր անունով են կոչվում։ Յետոյ ես
յիշեցի, թէ ինչպէս դուք բարի էիք դէպի
ինձ, երբ ես դեռ երեխայ էի։ Դուք տալիս

էիք զանազան անուշեղէններ, քաղցր բա-
ներ։ Եւ ես մտածեցի ինձ ու ինձ, որ դուք
չէք թոյլ տալ Նինիին մեռնել այն պատ-
ճառով, որ չունենք հազար ֆրանկանոց տոմ-
սակ։ Տիրուհի, տուէք ինձ այդքան փոխա-
ռութիւն, և եթէ կայ Աստուած, նա ձեզ
կօրհնէ։

— . . . . .

Այո, դա շատ մեծ փող է. բայց մի՞թէ
մարդու կեանքը չարժէ հազար ֆրանկ։ Ես
իմ ամբողջ կեանքում կաշխատեմ այդ փողը
վերադարձնել ձեզ, եթէ հարկաւոր է. և ար-
դէն ասացի ձեզ, որ ես լաւ բանուոր եմ.
եթէ անգործութիւն չը լինի, ես ձեզ երկու
տարուայ ընթացքում կը հատուցանեմ, ամ-
սական մաս մաս վճարելով։

— . . . . .

Դուք ինձ 10 ֆրանկ էք առաջարկում։
Ոչ, ես տաս ֆրանկով չեմ կարող Նինիին
տեղափոխել Նիցցա։ Ոչ, ոչ, անկարելի է,
որ դուք մերժէք ինձ։ Զէ՞ որ ձեզ համար
1000 ֆրանկը նոյնն է, ինչպէս ինձ համար
տաս սուն։ Զէ՞ որ դուք դեռ անցեալ ամ-
սին 200,000 ֆրանկ նուիրեցիք Օրմէսօնսի
վանքին։ Հա՛, ես հասկացայ, դուք կարծում
էք, որ ես ձեզ խաբում եմ, որ ես ձեզ հէ-

քիաթներ եմ պատմում։ Ոչ, երդվում եմ, որ ճշմարտութիւնն եմ ասում։ Նինիկս համար ես կը վախենայի սուտ խօսել, որպէսզի սուտը նրան դժբաղդութիւն չը պատճառէ։ Իսկ եթէ դուք դեռ կասկածում էք իմ մասին,—հրամայեցէք մեզ համար երկաթուղու տոմսակներ վերցնել և մեզ համար սենեակ վարձել Կանայում կամ Սան-Բաֆայելում և կամ ուրիշ մի տեղում, որտեղ շատ թանգ չէ և ուղարկեցէք այնտեղ մեզ մի քիչ փող, որպէսզի այնտեղ ապրենք երկու կամ երեք ամիս։ Տիրուհի, աղաչում եմ ձեզ. եթէ ցանկանում էք, ես կը խնդրեմ ծնկաչոգ—չէ որ սա Նինիի համար է։ Ես ինքս ոչինչ չարժեցող մարդ եմ։ Եթէ դա ինձ համար լինէր, ես կասէի.—«արժան չէ այդ բանին». բայց նա Աստծու հրեշտակն է։ Նա մրջիւնին անգամ վնաս չէ պատճառել։ Որպէս քնքոյշ է նա, ազնիւ է։ Մըտէք, տիրուհի, Տէնոն հիւանդանոցը նրան տեսնելու և հարցրէք հիւանդապահ կնոջից, թէ ինչպէս բոլորը սիրում են նրան այնտեղ։ Երդվում եմ, որ ես ինձ կը պահեմ օրինակելի կերպով, կը բանեմ, ինչպէս եզ և այլևս բոլորովին չեմ յաճախիլ գինետուն,

այնտեղից քիչ է օգուտը։ Ասացէք—այո, տիրուհի։

— . . . . . .

Դուք մերժում էք դրականապէս! «Թող սատկի Նինին, ինչպէս զզուելի կատու»! Ուրեմն ձեր կրծքում թղթէ տոպրակ է, փոխանակ սրտի։ Ո՜հ, ինչպէս վատ է այդ։ Ես երբէք այդպէս չէի մտածում ձեր մասին։

Իսկ պատրաստվում էի աղօթել ձեզ, ինչպէս Սուրբ Վինցերտին։ Ա՜, ուրեմն այդ միայն տեսքի համար է, մարդկանց համար, կեղծ բարեպաշտութեան համար։ Ձեր բոլոր բարեգործութիւնները այն նպատակով են, որ խօսեն նրանց մասին, որ լրագրներում տպեն նրանց մասին և բոլոր անկիւններում գոռան։ Որպէսզի կոմիտէներում ծերունի գեներալների կողքին նստէք։ Ահա և տուել են ձեզ ակադէմիական աստիճաններ!

— . . . . . .

Ոչ, ես ձեզ չեմ վիրաւորում, ես ճիշտն եմ խօսում. գուցէ դուք այդ յաճախ չէք լսում։ Ձեր ծանօթները, որոնց դուք կերակրում էք, այդ ճշմարտութիւնը չեն ասիլ ձեզ, նրանք միայն ձեր ափսէներն են լիզում։

Ի՞նչ. դուք ուզում էք ոստիկան կանչել։ Ոչ, սպասեցէք, տիրուհի, ես կանգնած եմ զանգի մօտ, սպասեցէք, ինձ լսեցէք մինչև վերջ։ Ձեր բարութիւնը—միայն ցուցանակ է. դուք փողը ցրվում էք միայն այն նպատակով, որ ձեր մասին գոռան ճանապարհներին, իսկ խեղճ աղջկան մահից փրկելու համար ոչ ոք չը կայ։

— . . . . . .

Ինչպէ՞ս, ինչպէ՞ս ասացիք—քո՞ծ (աղախին). ա՛խ, մի՛ք կրկնիլ. մի՛ք վիրաւորիլ նրան. նա իր անպաճոյճ աղքատ հագուստի մէջ կարող է հարիւր անգամ աւելի լաւը լինել ձեզանից—մետաքսով շրջապատված-ներիցդ։

— . . . . . .

Ոչ, ոչ, այդպէս մի՛ք գոռալ, առանց այդ էլ գլուխս տրաքվում է և աչքերս մթնում...

— . . . . . .

Վերջապէս կը լռե՞ս թէ ոչ, պառաւ կախարդ!!!

— . . . . . .

Բանուորի արիւնալից, լայն բացուած աչքերում փայլեց կատաղութիւնը։ Նրա ձեռքը անգիտակցաբար բռունցքով բարձրացաւ, պատրաստ՝ թերևս մահացու հարուած իջեցնելու, և յանկարծ հանդարտօրէն, անկարող կերպով քարշ ընկաւ. արցունքները մի բոպէ մթնացրին և հանդարտեցրին ահալից աչքերը...

—«Ոչ, ոչ, ապրի՛ր, անարդ արարած, —ասաց նա հանդարտ ձայնով և շուռ գալով բազկաթոռի վրայ ուժասպառ նստած հարուստ և անուանի բարեգործուհու մօտից, որ վախենում էր թէ նայել, թէ շընչել, և որ մինչև անգամ չը գիտէր, թէ կենդանի՞ է ինքը, թէ՞ մեռած,—ոչ, կրկնեց բանուորը ցածր ձայնով. կարծես, ինքն իրան խօսելով, և կամացուկ դուռը բանալով,—չեմ ուզում, որ դու Նինի հետ միաժամանակ մեռնես։ Ոչ, չեմ ուզում։ Եւ եթէ քո ստուածը—ապաստանարաններին ու վանքերին քո արած նուիրատուութիւնների համար, կը թողնէ քեզ դրախտ, որտեղ դու քեզ համար տեղ ես գտնել. ես չեմ ցանկանայ, որ դու այնտեղ հանդիպես Նինի հետ, որը այնտեղ կը լինի որպէս պայծառ, հեզահամբոյր մի հրեշտակ, իր տեղը տանջանքներով վաստակած։ Ես չեմ ուզում, որ այն լուսաւոր, հեզահամբոյր հրեշտակը

նայէր քեզ վրայ ժպիտով, թէկուզ հէնց սխալմամբ»...

Մրոտ բանուորը, որի աչքերը մոլորված—ցրված շարժվում էին և գունատ շրթունքները ինչ որ մրմնջում, աւելի շատ նմանում էր խելագարի, քան թէ սպանութիւնից խուսափող յանցաւորի։

Եթէ քաղաքատեսչական ոստիկանութիւնը գիտենար, թէ ինչ էր անցնում մի րոպէ առաջ նրա հոգում... բայց նա, բարեբաղդաբար, այդ չը գիտէր և չէր կարող գիտենալ, իսկ արդարադատութիւնը չէ պատժում դիտաւորութիւնները — նոյնպէս բարեբաղդաբար, որովհետև, այնուհետև ինչ կը լինէր խեղճ Նինի դրութիւնը, եթէ ոչ ոք ժպիտով չը պատախանէր նրա գանգատին, նրա խաղաղ և հնազանդ լռութեանը և կոշտ, կոպիտ, բայց սիրող ձեռքով չը շփէր նրա այրվող, մահուան քրտինքով ծածկված ճակատը։

Բարեբաղդաբար նաև պառաւ բարեգործուհու համար, որովհետև երկրի վրայ դրախտի դռները դեռ պէտք է բացվէին նրա առաջ։

Միմիայն գնալուց յետոյ նա դեռ երկար անշարժ նստած էր բազկաթոռի վրայ, որի

մէջ ընկած էր նա, կարծելով որ մոտեցել է իր վերջին ժամը, և դժուարութեամբ սթափվեց։ Նրա աչքերում մահուան երկիւղը աստիճանաբար տեղ էր տալիս գիտակցութեանը... հեռաւոր յիշողութեանը... Նա յիշեց իրան որպէս մանկամարդ աղջիկ, զգայուն և անկեղծ, որ ընդունակ է ջերմ սիրել և տանջվել, և յիշեց նրան, որին սիրում էր և որի համար տանջվում։ Դա շատ վաղուց էր, այնքան վաղուց, որ նրան թըւում էր, թէ դա ինքը չէր...։ Ոչ, ոչ դա ինքն էր։ Եւ իր առաջ սոսկալի պարզութեամբ պատկերացաւ այն օրը, երբ իր մայրը հաղորդեց օրհասական լուրը,—նա երբէք չի լինիլ կին սիրած տղամարդի, որովհետև վերջինիս վճռված է շուտափոյթ և անխուսափելի կորուստ.—բժիշկները երեսն հանեցին նրա թոքերի տուբերկուլոզը—թոքախտը, մի հիւանդութիւն, որ աւաղ, այն ժամանակ համարվում էր անբուժելի։ Ոչ մի աղաչանք, ոչ մի զոհաբերութիւն, ոչ էլ դրամը կարողանում էին որևէ բան անել սոսկալի, սպանիչ հիւանդութեան դէմ, որի մասին այն ժամանակ բժիշկները միայն անունը գիտէին...

Նա աւելի պարզ յիշում է նրա աչքերը

—մեծ, կապույտ, փայլուն, ուստի և [illegible] գեղեցիկ էին թւում.—սակայն այժմ այնպէս տխուր, որ իրան թւում է, թէ այդ աչքերը այս բոպէին էլ նայում են իր վրայ և ինչ որ աղերսում...

Ի՞նչ։

Նրա մարմնով սարսուռ է անցնում։ Այդ աչքերի հետ միասին նրան պատկերանում են և ուրիշ աչքեր,—նոյնպէս փայլուն և աղերսող։ Դա Նինին էր։ Դա այնտեղ—հիւանդանոցում մեռնող աղջիկն է—այս բոպէիս այստեղ եղած բանուորի խեղճ ընկերուհին։

Բայց այժմ, և ոչ թէ հեռու անցեալում—հէնց այժմ փրկութիւնը հնարաւոր է... Ո՜հ. եթէ կարելի լինէր կենդանացնել այն թանգագին, կապոյտ և տխուր աչքերը! Այժմ գիտութիւնը և փորձը միջոց են գտել կռվելու նախկին անողոք հիւանդութեան դէմ։ Եւ այդ միջոցը իր ձեռքումն է—հէնց այդ մասին էր աղերսում նոր դուրս եկած բանուորը...

— . . . . . .

Նինին պէտք է փրկվի։

ՀԱՆՐՈՒՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
7/II-1922
Москва, Мясницкая
ԱՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

— Վ Ե Ր Ջ —

ՀՀ Ազգային գրադարան
NL0306831

6919